

Ճշգրտվող տոկոսադրույքը կազմված է հետևյալ բաղկացուցիչներից (տարրերից)․

Բազային տոկոսադրույք

Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ

Ճշգրտվող տոկոսադրույքը հաշվարկված անվանական տոկոսադրույք է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Y_{\Sigma} = Y_F + Y_C$$

Որտեղ՝

Y_{Σ} –Ճշգրտվող տոկոսադրույք,

Y_F – Բազային տոկոսադրույք,

Y_C – Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ:

Բազային տոկոսադրույքի հիմնական տոկոսադրույք - ՀՀ բանկային համակարգի կողմից ՀՀ դրամով ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներից 1 տարուց մինչ 5 տարի ժամկետայնությամբ ներգրավված ավանդների միջին կշռված տոկոսադրույքի միջին ցուցանիշը՝ հաշվարկված որպես վերանայման օրվա դրությամբ հասանելի նախորդ ամսվա դիտարկման՝ կլորացված (մաթեմատիկական) ստորակետից հետո 1 տասնորդական նիշի ճշտությամբ»:

Բանկային համակարգի կողմից ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներից ներգրավված ավանդների տոկոսադրույքներին կարող եք ծանոթանալ

<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx> կայքի՝ «Ֆինանսական շուկայի տոկոսադրույքներ» բաժնի «Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները» հրապարակման մեջ:

Բազային տոկոսադրույքի երկրորդային տոկոսադրույք - ՀՀ Բանկային համակարգի կողմից 1 տարուց ավել ժամկետայնությամբ ներգրավված ժամկետային ավանդների տոկոսադրույքը՝ հաշվարկված, որպես վերանայման օրվա դրությամբ հասանելի նախորդ ամսվա դիտարկման՝ կլորացված (մաթեմատիկական) ստորակետից հետո 1 տասնորդական նիշի ճշտությամբ:

Բանկային համակարգի կողմից ներգրավված ավանդների տոկոսադրույքներին կարող եք ծանոթանալ <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx> կայքի՝ «Ֆինանսական շուկայի տոկոսադրույքներ» բաժնի «Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների տոկոսադրույքներ(ամսական)» հրապարակման մեջ:

Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ – 5 տոկոսային կետ

Ճշգրտվող տոկոսադրույքի առաջին վերանայում/սահմանում - պայմանագրի կնքումից 3 /երեք/ տարի հետո առաջիկա փետրվար կամ օգոստոս ամիսների քսաներորդ օրը

Պարբերական վերանայումներ - յուրաքանչյուր 6 /վեց/ ամիսը մեկ (փետրվար և օգոստոս ամիսների քսաներորդ օրը)

Ճշգրտվող տոկոսադրույքների կիրառման ամսաթիվ – վերանայվելու դեպքում նոր տոկոսադրույքը ուժի մեջ է մտնում վերանայման ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 20-ից՝ վարկառուին ծանուցելուց առնվազն մեկ ամիս հետո:

Ճշգրտվող տոկոսադրույքների կլորացում - մաթեմատիկական կլորացման կանոններով՝ տասնորդական տոկոսի ճշգրտությամբ:

Ճշգրտվող տոկոսադրույքը ենթակա է վերանայման, այն դեպքում երբ ճշգրտված տոկոսադրույքի և գործող տոկոսադրույքի տարբերությունը կազմում է 0,5 տոկոսային կետից ավելի:

Տոկոսադրույքի բարձրացման և իջեցման առավելագույն շեմը սահմանվում է 3,5 տոկոսային կետ, որը հաշվարկվում է տրամադրված վարկի սկզբնական տոկոսադրույքի նկատմամբ:

Օրինակ 1՝ եթե գործող դրամային վարկի տոկոսադրույքը 13.5% է և ենթադրենք վարկի տրամադրումից անցել է 3 տարի և Բազային տոկոսադրույքը այդ պահին 8% է: Հաշվարկվող նոր ճշգրտվող տոկոսադրույքը կստացվի $8\% + 5\% = 13\%$:

ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում.

Բազային տոկոսադրույքի հիմնական տոկոսադրույք - 6 ամիս ժամկետայնությամբ ժամկետային ապահովված օվերնայթ ֆոնդային տոկոսադրույքը (CME Term SOFR USD 6 Month)
(<https://www.newyorkfed.org/markets/reference-rates/sofr>)

Բազային տոկոսադրույքի երկրորդային տոկոսադրույք - 6 ամիս ժամկետայնությամբ ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերության կորի եկամտաբերություն
(<https://www.federalreserve.gov/releases/h15/>)